ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

«Հայաստանի Հանրապետությունում 2024-2028 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացմանն աջակցության» ծրագիր

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Էկոնոմիկայի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Ծրագիր

Ոլորտ

Գյուղատնտեսություն

Հանրային քննարկման ժամկետ

01/11/2023 - 21/11/2023

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 3 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 3 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

1 կողմ

3 դեմ

Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից

01/12/2023

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ և ԱՅԾԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ» ԾՐԱԳԻՐ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Թալթուլ Ստեփանյան 01.11.2023 20:44:35	Անհետաքրքիր է դառնում արդեն այսչափ բովանդակազուրկ նախագծերին արձագանքելը, առաջարկում եմ մի սահմանափակվեք ստորաբաժանման աշխատակազմով, ներռականություն ցուցաբերեք:	1" Ծրագրի ներառականության նպատակով առանձին դրույթներ քննարկվել են հանրապետության առաջատար գիտնականների և խոշոր ֆերմերային տնտեսությունների ներկայացուցիչների հետ:	
2	Թալթուլ Ստեփանյան 01.11.2023 20:41:17	Մեկ անգամ ևս կարդացեք ձեր իսկ կողմից ձևակերպած սույն ծարգրի <<ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ>> պարբերությունն ու բովանդակային համեմատություն անցկացրեք <<ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ>> բաժնի հետ: Ծրագրի իրականացումը պետք է նկարագրի նպատակին հասնելու ուղիները, ճանապարհները, ընդ որում նպատակով սահմանված բոլոր կետերի մասով, նպատակում գրել եք մի բան, իրականացնում եք այլ բան:	«Ծրագրի նպատակը և խնդիրները» բաժնում որպես առանջնահերթ նպատակ նախանշվում է «" " " պետական աջակցությամբ բարձրարժեք ոչխարների և այծերի ձեռքբերման (ներկրման) գործընթացի խթանումը " " " », իսկ «Ծրագրի իրականացման նկարագիրը» բաժնում շարադրված է պետական աջակցության մեխանիզմը, ինչպես	

			նաև այն ընթացակարգը, թե ինչպես տնտեսավարողը կարող է դառնալ պետական աջակցությունից օգտվող շահառու:	
3	Թաթուլ Ստեփանյան 01.11.2023 20:33:03	Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության ծրագրով նախատեսված էր՝ << 26. Ծրագիրը նախատեսված է հինգ տարվա համար և ընդգրկում է 2019-2023 թվականները: Ծրագրի շրջանակներում ոչխարաբուծությամբ և այծա¬բու-ծությամբ զբաղվող տնտեսավարողներին հնարավորություն կընձեռվի մասնչելի պայմաններով ձեռք բերել շուրջ 30 հազար գլուխ հղի ոչխարներ և այծեր, ոչխարի ու այծի արու և էգ տոհմային մատղաշ (ապագայում՝ Տոհմային ՄԵԿ)>>: Ի՞նչ արդյունքային ցուցանիշներ կան այս առումով:	Նշված ծրագրով մանր եղջերավոր կենդանիների բուծմամբ զբաղվող տնտեսավարողներին նախատեսվում էր պետական աջակցության ցուցաբերման 2 բաղադրիչ՝ վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորում և ձեռք բերված կենդանիների արժեքի 23 և 27% - ի չափով փոխհատուցում: Պետական աջակցության այդպիսի մեխանիզմները բավարար չեղան բարձր արդյունք ցուցաբերելու համար և տնտեսավարողները նվազ հետաքրքրություն էին ցուցաբերում ծրագրի վերաբերյալ: Հաշվի առնելով այդ հանգամանքը և տնտեսավարողների շահագրգռվածությունը բարձրացնելու անհրաժեշտությունը, մշակվել է քննարկվող ծրագիրը, որում նախատեսվում է պետական աջակցության այնպիսի մեխանիզմ, որը սահմանում է ձեռք բերված տոհմային կենդանիների	

			արժեքի 50% - ի չափով փոխհատուցում:	